ռաջնորդը, մեծ պատուով է ընդունվում Կ. Պոլսում, այդ ժամանակ պարսից քիւրդերը հետևելով սուլթանի հրաւէրին, գումարվում են Թիւրքաց սահմանների մօտ, որպէս զի վերջը անցնելով Թիւրքաց սահմանները, բնակեցած լինեն Հայաստանի մէջ և իրանց թւով այժ տան մահմետական տարրին Հայաստանի կէս—Հայկական նահանգներում։ Լօրդ Դրէբրին բողոքց Թիւրքաց Հայաստանում ռէֆորմներ մըտցնելու այդ օտարոտի միջոցի դէմ։

„Մասիս“ լրագրում կարդում ենք հետևեալը։

Սերաստիոյ հայ և Թիւրք հասարակութեանց կողմէ պատրիարքարան եկած հանրագիր մը դառնապէս կը գանգատի նահանգին կուսակալէն և կը խնդրէ որ իրենց գանգատը Բ. Դրան մատուցցի։ Ս. պատրիարքն յիշեալ հանրագիրը թագրիով մը ներքին գործերի նախարարին ուղարկեցնելու։

„Մասիս“ լրագրում կարդում ենք և հետևեալը։

Լէնդէնէն օգոստոսի 8 թւով եկած հեռագիր մը կը հաստատէ երեկիւն Հաւասի տուած տեղեկութիւններն ի մասին այն յայտարարութեանց զոր Զարլ Դիլկ ըսած էր երեսփոխանաց ժողովին նախընթաց աւուր նստին մէջ, վերաբերութեամբ հայկական խնդրոյն։ Զարլ Դիլկ յայտարարեր է թէ Բ. Դուռը մինչև ցարդ կարևոր բարեկարգութիւն մը գործ չը դրաւ, բայց լօրդ Դրէբրին այս նկատմամբ լուրջ դիտողութիւններ ըրած է վհ. սուլթանին և նրա առաջին նախարար Սայիտ փաշային յանձնարարելով որ գոնէ բարեկարգական առաժամանակեայ միջոցներ ձեռք առնուին, մինչև որ աւելի մեծայուն և վերջնական բարեկարգութիւնք ի գործ դրուին։ Այս առաժամանակեայ միջոցք թէ լինել յոսի կառավարչաց պաշտօնանկութիւն, լաւագոյն պաշտօնատարաց անուանում, հասարակային ապահովութեան վրա մեծագոյն հսկողութիւն և այլն։ Զարլ Դիլկ ապահովութիւն տուած է խորհրդարանին թէ լօրդ Դրէբրին ամեն ահիթէ օգուտ պիտի քաղէ հայկական խնդրոյն լուծումը փութացնելու համար։

Վիէննայում հրատարակվող „Journal d'Orient“ ֆրանսիական լրագիրը հրատարակեց իր 30 և 31 համարների մէջ մի պրոգրամ հայոց խնդրի վրա, որի մէջ այն միտքն է յայտնում որ Թիւրքաց հայերը պէտք է վերանորոգվին ոչ թէ զէնքի օգնութեամբ, այլ խաղաղ քաղաքակրթական մեքառամամբ, ինքնակրթութեամբ և անձնանձնութեամբ։ Լրագիրը մեծ համակրութեամբ է վերաբերվում դէպի Ռուսաստանը։

„Journal d'Orient“ լրագիրը հաղորդում է որ յուլիսի 23-ին Լէնդէնում կատարվեցաւ նորերս վանձնված Վէսմինստրի արքայի՝ Սանդրէի յուզարկաւորութեան հանդէսը։ Հանդուցեալը նախագահ էր հայերի համար կազմած յանձնաժողովների և նոյնպէս Լէնդէնի „Հայոց կրթական ընկերակցութեան“ (Armenian Educational Association) որ բաղկացած է մեծ մասամբ անգլիացիներից և նպատակ ունի կրթութիւն տարածել Հայաստանում։ Մանչէստրի հայերը ուղարկեցին նրա թաղման հանդիսին մի մեծ մխիթարեայ խաչ, ծաղիկներով զարդարված և հետևեալ արձանագրութեամբ՝ „Ի նշան երախտագիտութեան հայոց ազգի կողմից“։ Թաղման հանդիսին ներկայ էր Եսայի վարդապետ Աստուածատուրեան, Մանչէստրի հայերի հոգևոր գլուխը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻ

—

Կ. Պոլիս, 7 օգոստոսի

Այս բոպէս տանելով Մշակի համարները, ուրախութեամբ տեսայ Journal d'Orient-ի մասին արած յայտարարութիւնը. այս մասին ես հէնց երէկ գրեցի ձեզ, յայտնելով Ներսէս պատրիարքի մեծ ցանկութիւնը որ և է կերպով զօրաւորապէս օգնել յիշեալ լրագրին։ Շատ ուրախալի է այժմ, որ այս մասին դուք անապարեցիք խօսել. յայտնելով մի և նոյն ժամանակ պ. Գաս. Եաղուբեանի հետ շատ իրաւացի և գործնական դատողութիւններ պ. Դիլլորիէի հիմնելի թերթի վերաբերմամբ։ Ճշմարիտ ասեմ, հէնց առաջի օրից, երբ կարդացի Մշակի մէջ պ. Դիլլորիէի դիտաւորութեան և գործի յաջողութեան մասին, իսկոյն ուզեցի յայտնել մօտաւորապէս նոյն դիտողութիւնները նրա մասին, որ յայտնում էք հիմայ դուք և իմ բարեկամ Եաղուբեանը։ Բայց չուզելով վնասել ժողովրդի մէջ արթնացած աղնիւ եռանդին մի ազգասիրական գործի համար, ես լռեցի, մանաւանդ որ գիտեմ առանց այն էլ կան եռանդոտ մարդիկ, որոնց հաճելի է կարդալ իմ Կ. Պոլսի նամակների մէջ աւելի ոսկեզօծած «հայրենասիրական» տեսարաններ և նկարագրութիւններ քան թէ խիստ և կծու դիտողութիւններ Կ. Պոլսի ինսպէկցիայի մասին։ Իմանալով, ասում եմ, շատ եռանդոտների այսպիսի տրամադրութիւնը, ես ոչինչ չասեցի պ. Դիլլորիէի մտադրած ձեռնարկութեան մասին, թէպէտ ամեն կողմից լսում էի՝ շատ ձեռնտու մարդկանցից թէ պ. Դիլլորիէն լինելով շատ լաւ. հնագէտ և արուեստաբան, սակայն միտքդանդ անտարբեր մարդ է զանազան ընթացիկ քաղաքական գործերին, թէկուզ նոքա վերաբերվեն ոչ թէ հայերին, այլ ես նոյն իսկ իրան Ֆրանսիային։ Եւ այս շատ բնական է, որովհետև խիստ մասնագէտ մարդիկ և այն էլ այնչափ զառամեալ այլապէս գժուար կարող են լինել....

Այսպէս թէ այնպէս, բայց ինչ ուզում էինք և ինչին համակրում, վերջապէս գոանք և գոանք կարծեմ աւելի յաջող պայմաններով, քան թէ կարող էինք յուսալ. մենք ունենք այժմ մեր օրգանը աւտրիական մայրաքաղաքում Հիմայ հարցը կը գայ ամենաէականին, որի մասին հարկաւոր է լրջօրէն խօսել, ճանաչելով մեր ազգի շատ լաւ և ընկեր յատկութիւնների հետ միասին և նրա շատ տխուր և գէշ կողմերն էլ, որոնց մէջ առաջին տեղն է բռնում հայի նիսիա ազգասիրութիւնը։ Հայը շատ ուրախ կը լինի, որ հայոց մասին աչքատաց լինի թէ հայ և օտար լրագիրների մէջ, թէ պաշտօնական և կենսաբանական ասպարէզներում, թէ երեսի և աներեսոյթ ճանապարհներով. հայը շատ համակիր կը գտնվի «մեծամեծ» նիւթական օգնութիւններ անել. ամեն հարկաւոր եղած դէպքում, բայց երբ բանը խօսքից կանցնի իրականութեան, մէկ էլ տեսար, որ հայը ոգնիի պէս կուչ եկաւ, թագցրեց գլուխը ու միայն փչերը ցից արեց հայեացքիդ։ Այս բանը եթէ անենից լաւ փորձած մէկը կայ, դա մեր պարբերական հրատարակութիւններն են, էլ չեմ խօսում շատ ուրիշ երևոյթների վրա....

Ի նկատի ունենալով հայի այսպիսի բնաւորութիւնը և Վիէննայի լրագրին ոչ նիսիա կերպով համակրութիւն ցոյց տալու կարևորութիւնը, արդեօք այս անգամ ես հայը պիտի հաւատարիմ մնայ իր յիշեալ սովորութեան. չենք կարծում, որովհետև եթէ այսպէս յայտնվէր այս անգամ ևս, այդ պիտի լինէր մի սոսկալի անարդարութեան նշան, ինչպէս ապացոյց շատերի այն համոզմունքի թէ հայը, որչափ էլ նրա ազգային կեանքը և գոյութիւնը լաւ դրուեցան մէջ ու կոխե, դարձեալ կը մնայ առանց մի գիծ անգամ բարոյական յառաջադիմութեան։ Այսպիսի մի ամոթալի կարծիք ջրելու կամ հաստատելու համար, ահա ներկայացաւ այժմ ամենալաւ առիթ. «հայոց օրգան, հայոց օրգան» ամբողջ տարիներ կրկնելով, վերջապէս մենք դուռնը մեր ուղղեցինք Աւստրիայի մեծ մայրաքաղաքում, տեսնենք հիմայ թէ ինչպէս կը վարվենք այս դէպքում. կը մնանք մշտական նիսիա «անձնուէրները», թէ մեր անձնուիրութիւնը մեր ազգային կարևոր գործին կապացուցանենք գոնէ 8 ռուբլիով, որ հայոց նոր օրգանի տարեկան բաժանորդագրին է։ Եթէ այսպիսի մի կարևոր դէպքում էլ մենք ցոյց տանք մեր մշտական յատկութիւնը հայոց ազգի վրա մարդավայել համարում ունեցող մի եւրօպական պ. պուբլիցիստին, էլ վայ մեզ. այն ժամանակ վիէննա գնացող վաճառական թէ ուսանող հայ, փոխանակ մտնելու Journal d'Orient-ի խմբագրութիւն իր յարգանքը և մեծարանքը յայտնելու, պիտի երեսը ծածկէ ու հարիւր վերստ հեռու փախչէ այդ յարգելի խմբագրութիւնից. մինչ այսմեղ էլ կարող է հասնել գործը—Աստուած մի արասցէ. այն ժամանակը թող իւրաքանչիւր հայ հանգիստ խղճմտանքով թող իր հայ ծնած օրի վրա ու գնայ ինչ ուզում է լինի՝ քիւրդ, պարսիկ, հրեայ, գնչու, բայց ոչ հայ. մինչ այսպէս չէ...

Գիտեմ, որ մի հանգամանք մեծ արգելք կարող է լինել Կովկասի հայերին Journal d'Orient-ին տարեկան 8 ռուբլի վճարել բաժանորդ լինելու համար. այդ հանգամանքը չատերի ֆրանսերէն չիմանալն է. էլ թողնենք մի կողմ, որ առանց ֆրանսերէնի եռման բանելու, կարելի էր հէնց սագի համար ստանալ վիէննայի լրագիրը, ինչպէս սեղանի զարդ և ֆրանսերէնի խնացող հիւրերին դրադելու մի վայելուչ բան. թողնենք, ասում եմ, այդ մի կողմ, այլ գանք չօշափելի անձնական օգուտ ստանալուն յիշեալ լրագրի բաժանորդագրութիւնից։ Ցայտնի է նախ, որ Կովկասի դաւառական քաղաքներում վաղուց ազդէն չատ տարածված է ծնողների մէջ սովորացնել իրանց որդկերանց ֆրանսերէն, Մարսելիա կամ առ հասարակ Եւրոպա գնալու համար առևտրական նպատակով. յայտնի է նաև, որ քիչ երիտասարդներ չը կան այդ գաւառական քաղաքներում, որոնք որ և է կերպով բաւական աշխատել են և սովորել ֆրանսերէն, բայց կարդալու և խօսելու վարժութիւն ու գործածութիւն չունենալու պատճառով, կամ բոլորովին մոռացել են իրանց սովորածը կամ թէ մոռանալու վրա են։ Եւ ինչ ասել կուզէ, որ այդպիսիները նախ ժամանակ չունեն նստել իւրաքանչիւր օր մի քանի ժամ ֆրանսերէն գրքեր կարդալ. երկրորդ հազիւ թէ հարիւրից մէնը կարող է ձեռք բերել ուրիշ գիրք քան թէ Margot և Bobinson de douze ans,—իսկ մի և նոյն այդ չոր ու ցամաք գրքերը անդադար աչքով անցնելն էլ կարող է հասցնել մարդուն Գօրլի Պոտրուշկայի օրին։ Մինչդեռ յայտնի է միւս կողմից, որ լրագիր կարդալուց էլ հէնց, բաղմակողմանի և հետաքրքիր ընթերցանելի բան չէ կարող լինել ոչ միայն լոկ պլատոնական օգուտ համար, այլ ես օտար լեզու, այն էլ ամենաբնտիր քաղաքական լեզու սովորելու համար։ Ով որ գուվերնէօրներ և գուվերնանտներ չէ ունեցել օտար լեզուներ սովորելու համար, կարող է վկայել թէ որչափ ճիշդ է վերև ասածս։ Ուրեմն եթէ այս այսպէս է, մինչ իւրաքանչիւր հայը կը խնայէ տարեկան 8 ռուբլ Վիէննայի Journal d'Orient-ին, որը եթէ չէ կարող կարդալ ինքը, կարող է կարդալ իր փոքրիկ որդին և թարգմանել իր հօրը նորան ուրախացնելու և իրան օգուտ բերելու համար։ Կարծեմ որ գործին նայելով լոկ հէնց չոր շահի ու նիւթականի կողմից, յիշեալ ֆրանսերէն լրագրի ստանալը քիչ չանուէտ չէ և այս կողմից էլ, որից դուրս հայը ըստ մեծի մասին չէ ուզում ուրիշ չարժասիթ ճանաչել...

Այս տեսակէտից նայելով մեր նոր ֆրանսերէն օրգանին բաժանորդ գրվելու վրա, հարկաւոր եմ համարում յիշեցնել այստեղ ևս այն, որ մենք մինչև հիմայ դեռ չունենք մի փոքր ի չատ օրինաւոր բառգիրք ֆրանսերէնից հայերէն, իսկ Սրբաեան, Լամեան և այլն Վիէննայի ու Վիէննայի վարդապետների բառգիրքով ամենին մի բան չէ կարելի չինել։ Վանորայ կրկին կը յիշեցնենք, որ այս կողմից պպագրութիւնը վերջանալու վրա է յայտնի, գրեթէ ակադեմական կատարելութիւններ ունեցող գիտնական Նորայր Բիւզանդացու բառգիրքը, որը կարող է լինել իւրաքանչիւր հայ երիտասարդի սեղանի զարդը։ Արդէն մի անգամ ասել էի թէ այդ բառարանին այս գլխից բաժանորդ գրվողներին մեծ զիջում կը մնի, այն է մօտ մի երրորդականը, այնպէս որ հիմայ, այսինքն, մինչև բառարանի տպագրութիւնն վերջանալը, որ քիչ է մնացած, բաժանորդագինն է 20 ռուբլի, որ պիտի ուղարկած յայտնի քանկիր Մսիխեանին հետևեալ հասցէով. Constantinople, Galata, Mehmet-Ali pacha han № 4։ Իսկ տպագրութիւնը վերջանալուց յետ բառարանի գինը կը լինի մօտ 30—35 ռուբլ, ուրեմն զանազանութիւնը խիստ զգալի է։ Անցեալները, երբ այս մասին գրեցի «Մշակին», շատ չուտով Կովկասի զանազան տեղերից բաժանորդագրութիւնը սկսվեց, մինչև հիմայ ևս չատ յաջողութեամբ շարունակվում է. այս մասին քանից պատահելով ինձ մեր յարգելի գիտնական պ. Նորայրը, խնդրել է իր շնորհակալութիւնը և յարգանքը յայտնել ձեզ. եթէ մոռացայ կատարել այդ մինչև հիմայ, կը ներէք։ Ինչ այս մոռացութեան փոխարէն խնդրում այս անգամ ընդունէք և իմ շնորհակալութիւնը ձեր առաջնորդող յօդուածի համար «Մշակի» օգոստոսի 25, 136 թիվ մէջ. Այդ յօդուածով դուք առաջարկում էք Կովկասի մեր ազգային ուսումնարանների մէջ ուսման հետ միասին մտցնել և սկզբնական արհեստ, այդ ուսումնարանները ժողովրդի համար գրաւիչ անելու համար, բաղդաւոր և օրհնեալ միտք....

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Այժմ յայտնվեցաւ որ օգոստոսի 3-ին Մարսելում տեղի ունեցած գոմէշների արշաւանքի ժամանակ տախտակամածի փուլ գալուց սպանվեցան ոչ թէ 15, այլ 20 հոգի հանդիսականներից և վիրաւորվեցան ոչ թէ 150, այլ 1,000 հոգի։

—Բերլինի «National Zeitg.» լրագիրը համարում է Գամբետտայի Բէլվիլում արտասանած ճառը մի սպառնալիք եւրօպական խաղաղութեան դէմ։

—Վիէննայից հեռագրում են որ վերջին լուրերին նայելով անգլիական առաջին մինիստր Գլադստոն դիտաւորութիւն ունի հրաժարական տալ իր պաշտօնից։

—Ամերիկայի հրէաների ընկերակցութիւնը վճռեց նշանակել 5 միլիոն դոլարի (11 միլիոն-ռուբլ) գումարը Ռուսաստանից Ամերիկա գաղթող հրէաներին օժանդակելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 օգոստոսի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ այսօր տպված է Բարձրագոյն Հրաման օգոստոսի 12-ից մայրաքաղաքի կառավարութիւնը օրեր-պօլիցմէյստերին յանձնելու և Ս. Պետերբուրգի քաղաքապետութեան պաշտօնը ոչնչացնելու մասին, քաղաքապետի կանցելարիան համապատասխան կերպով փոփոխելով և յանձնելով նրա մասը նահանգապետի կանցելարիային, որին յանձնված է նախագահութիւն քաղաքային գործերի մասին պրիսուտստվիայի մէջ և հսկողութիւնը հասարակական վարչութեան կանոնաւորութեան վրա։ Գենէրալ կօպլով նշանակված է Օրեր-պօլիցմէյստեր։ Մոսկվայի օրեր-պօլիցմէյստեր նշանակված է գենէրալ Լանսկոյին։

ԱԹԷՆՔ, 14 օգոստոսի։ Թիւրքաց զօրքերը, դատարկելով Ցունաստանին զիջած երկրի երրորդ մասը, այրեցին Կայլցա գիւղը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 25½ կ., երկրորդ 94 ր. 25½ կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 12½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր. 55 կ., երկրորդ 226 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 12½ կ., երրորդ 91 ր. 37 կ., սակի 7 ր. 70 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լէնդէնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 220 մարկ։ Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ